

Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

ՂՈՂԱՆՋ ԱՎԵՏԻՍԻ

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:
Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...
Նա հետո պիտի դառնա պատանի,
Եվ երիտասարդ, և այր իմաստուն,
Անբախտ Մարոյին լացով սպանի,
Մեր հառաչանքը հասցընի Աստծուն:
Մրմունից դաղված նրա բերանով
Սարոյի նանը պիտի ողբ ասի,
Մսրա զորքի հետ Դավիթը խոսի,
Գիքորը կանչի. «Էստի՛ համեցեք...»:
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել
Իր մոխրակալած-հրակեզ հոգին
Եվ՝ որքան տրտում - նույնքան կենսագին՝
Տարիներ հետո նա պիտի դառնա

Յատուկ Պոէմ

Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
Միևնույն թվին, Լոռուց շատ հեռու՝
Անատոլուի խավար խորքերում
Մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ:
Մինչ հայրը նրա՝ Գևոն կոշկակար,
Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ,
Հարևան-դրկից՝ մի-մի շիշ օղով՝
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի:
Հետո հերթն եկավ կանանց հոսանքի.
Մի թաս խավիծով կամ ձվածեղով՝
Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝
Որդուն մաղթելով արևշատություն,
Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք,
Աղվորիկ մի հարս,
Բարի տատություն...
.....
.....
Երևի այդօր -
Եթե ոչ մարդկանց,
Գեթ ամենալուր և ամենազոր բնության համար -
Տոն էր անսովոր.
Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել,
Լսում էր չէ որ,
Թե ինչ նվագներ և ինչ անհամար,
Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում
Այդ երկու թխլիկ նորածինների
Դեռ ոչինչ չասող առաջին ճիչում...
Երևի այդօր ցերեկը ձգվեց՝
Քնից նոր զարթնած կտրիճի նման,
Իսկ ստվերները՝

Հարված սպասող շնիկների պես պոչերը քաշած՝
Լուռ կծկըվեցին...
Երևի ահեղ ջրվեժներն այդօր
Հոսեցին անձայն, ինչպես նկարում,
Եվ լույսը երգեց,
Քարը պար եկավ...
Անատոլուի ավազուտներում երևի այդօր
Մարդիկ - քնի մեջ - ըմպեցին զովը Լոռվա ձորերի,
Ջահել այրու պես ծարավ արտերը և այգին պապակ
Հագուրդ ստացան կրքոտ Դևբեդի ջրից անապակ...
Իսկ Լոռվա ձորում քուն մտած մարդկանց
Երազ այցելեց,
Մի հրաշալի՛ց-անսովո՛ր երազ.
Հարավից չված հազարան մի հավք,
Սոխակի ձայնով-ուժով անգըղի,
Աքլորների հետ լուսայգ շեփորեց կտուրներն ի վար,
Հետո դարավոր կաղնու փչակը կտցով քչփորեց
Եվ - մե՛կ էլ հանկարծ -
Իր կտցի վրա այնտեղից հանեց
Շողեր ծալծըլված,
Շողեր դարսիդարս՝
Օձունի վանքի Շարակնոցի պես:
Մինչ այդ շողերը, ծալ-ծալ բացվելով,
Հենց այն է պիտի - ծլընգ հա՛ ծլընգ - զնգային կարմիր,
Հազարան հավքը հրթիռվեց-գնաց՝
Վերև սուրացող ասուպի նման,
Եվ... թառե՞ց արդյոք Լուսաստղի վրա,
Թե՞ ինքը դարձավ Լուսաստղը մի նոր...
...Երևի այդօր - քանի՛ դար հետո -
Երկինք ու երկիր հաշտվեցին նորից...

...Երևի այդօր - քանի՛ դար հետո -
«Հայաստան» բառից պոկվեցին - ընկան
«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...

ՂՈՂԱՆՋ ՈՐԲՈՒԹՅԱՆ

Իր ժողովրդի զավակն իսկական՝
Ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց.
Նա նույնիսկ չկար և մի տարեկան,
Երբ... մայրը գնաց:
Ա՛խ, եթե գնաց՝
Նրա լույս հոգին թող որ համբառնա,
Արժանի դառնա
Իր հավատացած երկնային գահին:
Բայց ինչո՞ւ գնաց Հայոց Թագուհին:
Մնար
Ու ծիծ տար
Իր Սողոմոնին - մեր Կոմիտասին:
Մնար
Ու հոգար
Մեր մինուճարի - իր որդու մասին:
Մնար ու նրան մայրություն աներ,
Հուսահատության, տրտմության պահին
Նրա ճակատի ամպերը վաներ,
Նախ՝ նրա ոտի
Ու հետո՝ սրտի
Փշերը հաներ:
Մնար, որ հետո,
Շա՛տ ու շա՛տ հետո,
Երբ որդին քայլեց մութ արահետով,

Որ անդարձ եղավ ու եղավ անել,
Թերևս նա իր մայրական սրտով
Իր մինուճարի ու մեր հանճարի
Սև ցավը տաներ...
Մնար,
Որ նրան մի ողջ ժողովուրդ
«Մեծ Մա՛յր» անվաներ,
«Վեհամա՛յր» կոչեր.
Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
Իր բերնին տաներ,
Փեշերը պաչեր...
Մնա՛ր... Չմնա՛ց:
Գեթ հայրը մնար...
Բայց հայրն էլ գնաց,
Երբ որդին չկար տասը տարեկան:
Իր ժողովրդի զավակն իսկական՝
Ժողովրդի պես նա որբուկ մնաց:
Նա մնաց անտուն, մնաց բնավեր:
-Տո լա՛ճ տնավեր...
Եղավ անդադար, եղավ բնավեր:
-Տո լա՛ճ տնավեր...
Գրկանոց հասակ, վիրավոր սրտիկ,
Աչքերում՝ արցունք, ճակատին՝ քրտինք,
Աշնան պաղ քամուն ու ձմռան ցրտին
Որբուկն ո՞ւր մնա, որբուկն ո՞ւր գնա,
Որտե՞ղ տաքանա, ո՞ւմ թոնրան շրթին:
-Տո լա՛ճ տնավեր...
Որբուկի սիրտը՝ ապակի փշուր,
Ա՛խ, դրսից կարմիր - ներսից փուշ մասուր,
Որբը՝ մոլոր գառ, աշխարքը՝ մսուր,-

Ո՞վ նայի վրան կամ ո՞վ տա նրան
Մի պատառ ժպիտ, շոյանք մի փշուր:
-Տո լա՛ճ տնավեր...
Դռնեդուռ երգեց - ձայնը՝ կլկըլան,
Բերանն էր կերգեր, իսկ աչքը կուլար,
Դունչիկից կելներ ծխի տաք քուլան,
Սրտիկն էր էրվում, սրտիկ սևավո՛ր,
Ցավերն էին փուքս, անձիկն էր քուրան...
-Տո լա՛ճ տնավեր...
Երկու ձիգ տարի նա այսպես պիտի
Ման գա երգելով ու շուրջը դիտի
Մի հացի հույսով կամ մի հավկիթի,
Միտքը՝ հազար տեղ, աչքը՝ մի կետի...
Սկիզբըդ խոց էր, վերջըդ՝ ո՞վ գիտի...
-Տո լա՛ճ տնավեր...

ՂՈՂԱՆՋ ՑՆՈՒԹՅԱՆ

Գևոն չթողեց որդուն ապարանք,
Ոչ էլ Թագուհին թողել էր գանձեր,
Բայց ինչ ունեին-չունեին նրանք՝
Իրենց որբացած որդուն էր անցել:
Իսկ ի՞նչ ունեին: Լոկ ձայն կլկըլան.-
Մերթ այնպես մեղմիկ,
Ասես թե գինով լցնում են կուլան.
Մերթ այնպես զնգուն,
Ասես թե կիրճում հովն է շնկշնկում.
Մերթ այնպես խաղաղ,
Կաքավն է ասես սաղմոսում «կղա».
Մերթ այնպես հորդուն,

Ասես ընկել ես ջաղացի ջրտուն...
Ներանք գիտեին իրենց Կուտինան՝
Անատոլուի խավար խորքերում:
Բայց նրանք, դիցուք, և գիտենային,
Թե իրենց պապի պապին ու քեռուն
Գաղթի ճամփան է բերել հասցըրել
Ինչ-որ Ցղնայից այս Կուտինային:
Այսքանը թեկուզ և գիտենային:
Ո՞վ պատմեր սակայն, որ գյուղն այդ Ցղնա
Եվ Մասյաց փեշը Գողթանն է չքնաղ:
Արդեն կիսակույր՝ տաճկախսավարից,
Ո՞վ պատմեր նրանց Գողթան գավառից,
Գողթան գավառի երգասաններից՝
Վիպող-վիպասան մեր գուսաններից:
...Փանդիռը գրկած ու վինը ծնկան,
Իրենք իրենցով ու դիցով լեցուն՝
Դուռ-դարպասների սալքարին նստել,
Երգել են նրանք վեպը Սաթինկան,
Աչքերն են գովել Ալանաց դստեր,
Եվ խոսքը խելոք, և մեջքը բարակ,
Եվ Արտաշիսի սիգալը արագ՝
Ձեռքին շիկափոկ - ոսկեօղ պարան...
Իսկ Արտավա՛զդը, որին և տարան
Քաջքերը ի վեր Ազատն ի Մասիս...
Իսկ հապա հպարտ Տրդատի՛ մասին,
Որ սեգ սիգալով՝
Իր հուժկու քայլով
Գետերի թմբեր և ամբարտակներ
Ավիրեց տարավ...
Իսկ Շամիրա՛մը պագշոտ

Ու տաքշող,
Գեղեցիկ ապրած - գեղեցիկ մեռած
Գեղեցիկ Արա՛ն...
Հաճախ կույր ծնված, անուս ու թերուս,
Բայց միշտ ողողված կրակով ներքին,
Իրենց յոթնաղի տավիղը ձեռքին՝
Նրանք են երգել ծնունդն այն աստծո,
Որ հուր հեր ուներ, բոց ուներ մորուս,
Երբ երկնում էր ծով, երկիր ու երկին,
Երբ ծուխ էր ելնում եղեգան փողից,
Երբ բոց էր ելնում եղեգան փողից...
Երգել են նրանք մեր պտղած հողից,
Գինուց, խաղողից,
Մեր սրտի դողից.
Երգել են նրանք մեր ցորեն հացից,
Մեր խինդ ու լացից,
Մարտում ընկածից.
Խորհել՝ երգելով,
Նվագով ցավել,
Երգել ձեռքերով՝
Պարել-կաքավել...
Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք,
Փող ու թմբուկին խաղացող մատներ,
Լեռն ի վար վարգող եղնիկի ոտներ,
Եվ Նավասարդյան թարմ առավոտներ,
Եվ առավոտներ վառ Վարդավառի,
Եվ ծուխ ծխանի՝ հայրենի կրակ,-
Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք՝
Վիպասանները Գողթան գավառի:
...Ո՞ւմ մտքով կանցներ, թե Գողթնից գաղթած,

Գերանը ջարդած ու սյունը խախտած
Ինչ-որ տնակի կիսախավարում,
Գողթնից շատ հեռո՛ւ, մի խորթ գավառում,
Որտեղ վարակը օտար շարավի
Ուտում էր մարմին ու հոգի կրծում,-
Ո՞ւմ մտքով կանցներ, և ո՞վ էր կարծում,
Թե պիտի շողա Գողթան շառավիղ,
Պիտի բոցկլտա Գողթան պայազատ՝
Նույնքա՛ն հարազատ,
Նույնքան հա՛յ ազատ,
Որքան և նրանք.
Արժանի ժառանգ
Գողթան գավառի հայ գուսանների,
Փողհար-փանդռահար վիպասանների՝
Օտարի շնչից զանազանելի,
Այդքանով՝ նաև անհասանելի...
Ո՞վ է հասկացել քմայքը բախտի,
Եվ այն էլ... հայոց.
Հանկարծ կեռմանը ազգավեր գաղթի՝
Կածանը վայոց,
Դառնում է ճամփա համահավաքման,
Խոյանք է դառնում թռիչքը անկման...
Ո՞վ է հասկացել քմայքը բախտի,
Եվ այն էլ... հայոց:

ՂՈՂԱՆՋ ՀՈՒՍՈ

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:

Սրբագործված հին-հին քարեր:
Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր...
Եվ Ճեմարան՝ մտքի կաճառ:
Ճեմարանի բակում արձակ,
Որտեղ էլ որ աչք ես ածում՝
Զարմանալի հավաքածու
Խոսվածքների, տարազների:
Ու բոլորի դեմքի վրա՝
Վա՛խ, սպասո՛ւմ, անքնությո՛ւն,
Խոսուն հետքեր երազների:
Ամեն մեկը՝ մի գավառից,
Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:
Ամեն մեկը խիտ խավարից՝
Երազում է լույսի մի մաս,
Նույնն է ուզում.
Ուսո՛ւմ, ուսո՛ւմ...
Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,
Հագին տարազ տաճկահայի.
Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝
Վրան պնդած մազե գոտիկ,
Նախշուն գուլպա՝ վրան գոլեր,
Ու պոչավոր մաշված սոլեր:
Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ քելե՛ր-ցոլե՛ր...
Ամենքն՝ իրար մոտիկ-մոտիկ,
Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:

Թե զարնեին սրտին դանակ՝
Մի պուտ արյուն դուրս չէր հոսի:
Ո՞նց չմնա նա մեկուսի,
Ո՞նց խառնըվի, ասի-խոսի,
Թե... հայերեն վատ է խոսում:
Բայց նա, մեկ էլ Աստված գիտի,
Թե ինքն ինչպե՛ս, ոնց է ուզում
Ուսո՛ւմ, ուսո՛ւմ:
Սակայն նրան
Ո՞վ կընդունի, այն էլ... որտե՛ղ -
Մի հոգևոր ուսումնարան,
Որի սանը մի օր պիտի
Հագնի սքեմ վարդապետի:
Իսկ նա....
Եվ նա վաղը պիտի
Երգի ի լուր և ի վճիռ
Համայն Հայոց Հայրապետի...

ՂՈՂԱՆՋ ՆԵՐՄԱՆ

Եվ նա սկըսեց... թուրքերեն երգել:
Մանկական ձայնը՝ սկզբում կերկեր,
Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,
Հունի մեջ մտավ
Ու գնա՛ց-գնա՛ց:
Կաթողիկոսը մթագնեց մնաց:
Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած
Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝
Հենց նոր սկսվող ժպիտը հանգավ:
Առաջի՛ն անգամ,

Առաջի՛ն անգամ
Ա՛ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
Սրբապղծորեն թուրք երգ է մխում...
Ա՛ստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
Հովվապետն ինքը ականջ է կախում
Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...
Ա՛ստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
«Հայր մեր», «Միայն սուրբ»,
«Արեգական արդար»,
«Ով զարմանալի»
Կամ «Խորհուրդ խորին»,
Ուր գրաբարն է հնչել դարեդար,
Եվ շարականն է հուզել բոլորին,-
Ա՛ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
Առաջի՛ն անգամ,
Առաջի՛ն անգամ
Սրբապղծության մանանեխ ընկավ...
Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ՝
Ինչպես վայել է՝ անայլայլ մնաց:
Իսկ մանկան ե՛րգը... թա՛փ առավ գնաց:
Գնա՛ց-բարձրացա՛վ,
Եկա՛վ-ցածրացա՛վ,
Քարեքար ընկավ, պատեպատ խփվեց,
Եվ հետո՝ կրկին պոկվե՛ց ու գնա՛ց,
Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց,
Մի անտես թելով կարծես թե կապվեց
Եվ, մի պահ հետո, հանկարծ ցած թափվեց.
Թափվեց՝ նշենու ծաղկաթերթի պես,
Հին վանքի ծեփի ճաքած շերտի պես...
Բառե՛ր... եղո՛ւկ: Իսկ ձա՛յնը... զուլա՛լ.

Այդպես լեռնային վտակն է կարող
Քարերի վրա ծիծաղել ու լալ:
Բառե՛րը... եղո՞ւկ: Իսկ ձա՛յնը... գերո՛ղ.
Մերթ բողոքում է ու գանգատ անում,
Մերթ՝ դառնում այնպես վսեմ ու բարի,
Կարծես հինավուրց այս Մայր Տաճարի
Երկինք խոյացած զանգակատընում
Կախել են մի նո՛ր-անլեզվա՛կ մի զանգ՝
Մի համակ հուզանք...
Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թվաց՝ երկինքն է կապույտ ծիծաղում,
Թվաց, թե շոգը հանկարծ կոտրվեց,
Թվաց, թե մի հին երդում կատարվեց...
Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
Թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում,
Ովքե՞ր են շուրջը՝ իր Վեհարանում,-
Եվ այդքանի մեջ,
Ասես քնի մեջ,
Նա դանդաղ ժպտաց
Աչքերով իր թաց:
Հետո ժպիտը սկըսեց հալվել
Ու հետզհետե անհետ վերացավ,
Մինչդեռ աչքերի թացն ավելացա՛վ,
Թացն ավելացա՛վ ու ավելացա՛վ...
Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց.
-Որդյա՛կ իմ, ո՛րբ իմ...
Ու ձայնը մարեց: